ՄԵՍՐՈՊ ԹԱՂԻԱԴՅԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Ալվարդ Ալեքսանյան
ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. թեկնածու

Մեսրոպ Թաղիադյանը[1] 19-րդ դարի առաջին կեսի հայ հասարակական- քաղաքական մտքի ներկայացուցիչներից էր և մեծ դեր է խաղացել նոր ժամանակաշրջանի գաղափարախոսության ձևավորման գործում: Նա գրող էր, հասարակական գործիչ, մանկավարժ, պատմաբան և տոգորված էր լուսավորչական գաղափարներով: Նա, իր գիտապատմական և հրապարակախոսական աշխատություններում և հոդվածներում խոսելով պետության, իրավունքի, նրանց էության մասին, հետապնդել է հասարակական կյանքը նոր հիմքերի վրա վերակառուցելու, ժողովրդական զանգվածների տնտեսական վիճակը բարելավելու նպատակը: Նրա լուսավորչական գաղափարները «Ազգասէր» և «Արարատյան ազգասեր» թերթերի միջոցով Կալկաթայից հասել է հայ գաղթօջախները և Հայաստան:

Մ. Թաղիադյանը իր իրավաքաղաքական հայացքները արտահայտել է «Պատմություն Պարսից» (1847թ.), «Վէպ Վարսենկան Սկայուհւոյ» (1847), «Ճանապարհորդություն ի հայս» (1847), «Մեսրովբեան առաջնորդ մանկաց» (1847), «Ճառ դաստիարակութեան օրիորդաց» (1847) աշխատություններում և հրապարակախոսական հոդվածներում: Հատուկ ուշադրություն է դարձրել միապետական կարգերի էության, մեծ տերությունների գաղութատիրական քաղաքականության մերկացման վրա, խոսել է կնոջ իրավազուրկ վիճակի մասին, ինչպես նաև խանդավառությամբ է ընդունել Արևելյան Հայաստանը Ռուսաստանի կազմի մեջ մտնելու լուրը:

Մ.Թաղիադյանի քաղաքական-իրավական հայացքների գլխավոր խնդիրը եղել է հայ ժողովրդի մեջ լուսավորության տարածումը: Նրա համոզմամբ հասարակության սոցիալ-տնտեսական, արտադրական փոփոխությունները կարող են կատարվել գիտության զարգացման միջոցով: Նա գտնում էր, որ «Անհնարին է ազգի կամ անհատի երջանիկ լինելը առանց գիտության»[2]: Մ. Թաղիադյանի սխալն այն էր, որ

---

[1] Մեսրոպ Թաղիադյանը ծնվել է 1803թ. Երևանում: 10 տարեկան հասակում մեկնում է էջմիածնի վանք՝ կրթություն ստանալու: 1823թ. Պարսկաստանով գնում է Հնդկաստան, Կալկաթա: Կալկաթայում դասավանդում է Հայ մարդասիրական ճեմարանում, իսկ 1826թ. ընդունվում է տեղի միակ բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ անգլիական եպիսկոպոսական ճեմարանը: 1830թ. վերադառնում է Հայաստան լուսավորչական աշխատանքներ կատարելու ցանկությամբ, սակայն հանդիպելով բազմաթիվ արգելքների՝ 1889թ. վերադառնում է Հնդկաստան, որտեղ տնտեսական ծանր պայմաններում զբաղվում է ստեղծագործական աշխատանքով: 1845թ. վաճառական Մանուկ Զորաբյանի ջանքերով Կալկաթայում հիմնվում է «Արարատյան ընկերություն»-ը, որն իր առաջ խնդիր էր դրել մամուլի և գրականության միջոցով պահպանել ազգային տարրերը հեռավոր Հնդկաստանի հայության մեջ, տարածել լուսավորություն և այլն: Ընկերության կազմում ակտիվ աշխատանք է կատարում Մ. Թաղիադյանը: 1845թ. մինչև 1852թ. ընդմիջումներով խմբագրում է այդ ընկերության հիմնադրած «Ազգասէր», այնուհետև իր սեփական միջոցներով հրատարակած «Ազգասէր Արարատյան» թերթերը: Դրանց հրատարակությունը դադարելուց հետո՝ ընկնելով տնտեսական ծանր դրության մեջ, ցանկանում է վերադառնալ հայրենիք, սակայն 1858թ. ճանապարհին մահանում է:

[2] «Ազգասէր Արարատեան», 1849, 16, էջ 126:

նա պատմական դեպքերի և իրադարձությունների ընթացքը, ժողովուրդների սոցիալական, քաղաքական վիճակը պայմանավորում էր միայն գիտության զարգացմամբ, խելքի և գիտականորեն հիմնավորված գործելակերպով: Նման պատկերացումը, լինելով իդեալիստական, այնուամենայնիվ առաջադիմական էր հասարակական երևույթների կրոնական ըմբռնման համեմատությամբ: Պետք է նկատի ունենալ նաև, որ դա պայմանավորված էր ինչպես այն միջավայրով, որում գործում էր հայ լուսավորիչը, այնպես էլ այն պրակտիկ խնդիրներով, որոնք նա դնում էր իր առջև: Նա կարծում էր, որ հայ ժողովրդի անցյալ և իր ժամանակաշրջանի սոցիալ-քաղաքական ծանր վիճակը հետամանցության հետևանք է: «Որքան ցավալի բան է տեսնել, որ մեր ազգը միայն էս դաստիարակության պակասության համար ինչ բարութեններից զրկուել է և ինչ թշուառություններ է կրել այլ և այլ դարերի մեջ»[1],-գրում է Մ. Թաղիադյանը: Առաջնորդվելով նման ըմբռնումով՝ նա իր հասարակական գործունեության հիմնական նպատակը համարում էր ժողովրդի կրթության ու դաստիրակության գործին ծառայելը:

Հայ լուսավորիչը մերժում էր միապետական-բռնապետական կարգերը, քննադատում էր ճորտատիրությունը՝ որպես բանական էակի բնական իրավունքին հակասող երևույթներ: Մարդիկ բնությունից ծնվում են ազատ և հավասար, հետևաբար նրանք պետք է հավասար լինեն իրար նկատմամբ: «Եթե ազատ օրենք և ազատ կեանք ոիցէ նոցա, այնպիսի ոք ուրեմն համարեն ծնեալ ի բանտ և մեռանել ի բանտի»[2]:

Ինչպես այլ երկրների լուսավորիչները, այնպես էլ, Մ. Թաղիադյանը ճորտատիրական բռնակալական կարգերը քննադատել է՝ ելնելով մարդու ազատության ու հավասարության պահպանման սկզբունքից:

Քննադատելով ավատատիրական-միապետական կարգերը, հասարակության դասային բաժանումը և գյուղացիության ճորտային կախումը՝ նա Ֆրանսիական լուսավորիչների օրինակով հանդես էր գալիս Հայաստանում բուրժուական հարաբերություններ ստեղծելու գաղափարով: Նրա կարծիքով, բուրժուական պետական կարգը աշխատավոր լայն զանգվածներին կազատի շահագործողներից և անօրինակություններից: Բուրժուազիան, խորտակելով ավատատիրական բռնապետական կարգերը, կստեղծի այնպիսի կարգեր, որտեղ մարդիկ կապրեն ազատ և իրավահավասար: Նա երազում էր Հայաստանը տեսնել որպես ազատության, կուլտուրապես ու տնտեսապես բարձր նվաճումների հասած երկիր: Այդ պատճառով էլ իր հոդվածներում առաջ էր քաշում բուրժուազիայի տնտեսական և քաղաքական հզորացման հարցը:

Մ. Թաղիադյանի կարծիքով ուժեղացած հայ բուրժուազիան կարող է օգնել Հայաստանի տնտեսական և կուլտուրական վերելքի գործին: Չտեսնելով որևէ այլ ուժ՝ նա միայն հայ ունևոր խավերին էր համարում հայ կյանքի առաջադիմության կազմակերպիչը և գործնական կրողը:

Սակայն ուսումնասիրելով բուրժուական պետությունների հասարակական կյանքը՝ տեսնում էր, որ այդ պետություններում չեն վերացել մարդկանց թշվառությունը, իրավազրկությունը, անօրինականությունները: Անդրադառնալով բուրժուական հարաբերություններում փողի դերին՝ ցույց է տալիս, որ այն իշխում է կյանքի բոլոր բնագավառների վրա, նրանով ոչնչացվում են ազատությունն ու հավասա-

[1] «Ազգասէր», 1846, 22, էջ 15:
[2] «Ազգասէր», 1847, 91, էջ 153

ությունը, գնվում և վաճառվում են մարդկանց խիղճը և արժանապատվությունը: Նա քննադատում էր նաև բուրժուական պետությունների գաղութային քաղաքականությունը: Քաղաքակրթության և սոցիալական առաջընթացի ուղու վրա կանգնած պետությունները գաղութացնում և թալանում են հետամնաց ժողովուրդներն, նրանք հարստանում և հզորանում են այլ ժողովուրդներին ստրկացնելու և կողոպտելու ճանապարհով:

Որպես առաջադեմ մտածող՝ Մ. Թաղիադյանը բարձր էր գնահատում եվրոպական լուսավորությունը, սակայն միաժամանակ հասկացավ, որ քաղաքակրթությունը իր հետ իսկական ազատություն, հավասարություն ու արդարություն չի բերում:

Մ. Թաղիադյանը իր քաղաքական հայացքներով արտահայտել է այն միտքը, որ գաղութացված ժողովուրդները երկար ժամանակ չեն կարող հանդուրժել գաղութարարներին, որ ժողովրդական ընդհանուր դժգոհությունները ի վերջո վերածվելու են անկախության և ազատության համար մղվող համաժողովրդական, ընդհանուր պայքարի՝ գաղութատիրական ռեժիմը տապալելու և անկախության հասնելու համար:

Այսպիսով, նա հանգել է այն եզրակացության, որ բուրժուական տերությունների նվաճողական և գաղութային քաղաքականությունը դատապարտված է կործանման, որովհետև ճնշված ժողովուրդները վաղ թե ուշ կթոթափեն գաղութային լուծը և հնարավորություն կստանան զարգացնելու իրենց ազգային կուլտուրան և տնտեսությունը:

Հետաքրքրություն են ներկայացնում Մ. Թաղիադյանի հայցքները Հայաստանի պատմական տարածքների արևելյան մասը Ռուսաստանին միացվելու վերաբերյալ: Ինչպես հայ հասարակական-քաղաքական մտքի ներկայացուցիչները և հայ ժողովուրդը, Մ. Թաղիադյանը ևս ջերմորեն ողջունեց այդ կարևորագույն իրադարձությունը: Ռուսաստանի կողմից Երևանի ազատագրման կապակցությամբ՝ 1828թ. նոյեմբերի 1-ին, հեռավոր Հնդկաստանից նամակ է գրում իր համաքաղաքացիներին. «Աչքներդ լոյս, որ մեր քաղցր աշխարհքն պարսից չարչարանքիցն ազատուեց»[1]:

Ինչպես ժամանակի շատ առաջադեմ մտածողներ, Մ. Թաղիադյանը ևս հայ ժողովրդի ազատագրումը թուրքական լծից և հայկական հողերի միավորումը կապում էր Ռուսաստանի ռազմաքաղաքական օգնության հետ:

Քանի որ հայ ժողովրդի մի մեծ հատված գտնվում էր Թուրքիայի իշխանության ներքո, իսկ նրա մի զգալի հատված, չկարողանալով տանել օտարերկրյա ծանր լուծը, հեռացել էր և բնակություն հաստատել Եվրոպայի և Ասիայի տարբեր երկրներում, Թաղիադյանը առաջ էր քաշում հայ գաղութների փոխադարձ կապի և համագործակցության խնդիրը: «Ազգային կապակցութեան պետս ունիմք, եղբայրք, և ազգային գործակցութեան՝ առավել ևս»[2],-գրել է նա: Թաղիադյանը այն կարծիքին էր, որ հայ ժողովրդի ձուլումը այն երկրների ժողովուրդների հետ, որտեղ նրանք բնակվում են, կանխելու համար, անհրաժեշտ էր հայ մասսաների մեջ պահպանել հայոց լեզուն: Ազգի պահպանման և հայ ժողովրդի միաձուլման առաջն առնելու համար անհարաժեշտ է պահպանել նաև ազգային ավանդույթներն ու սովորույթները, նրա դարավոր կուլտուրան: «Այս հարցը նա սերտորեն կապում էր կրոնի և հայ լուսավորչական եկեղեցու հիմունքների անաղարտության հետ: Ըստ նրա ազգային կրոնա-

[1] **Տ. Հովհաննես Կ. Մկրեան,** Կենսագրութիւն Մեսրոբայ դաւթեան Թաղիադեանց Երեւանցւոյ, էջ 133:
[2] «Ազգասէր», 1847, 121, էջ 385:

կան ավանդությունները կարող են պատվար հանդիսանալ հայ ազգի այլ ազգերի հետ ձուլվելու դեմ: Ազգային կրոնը, կրոնական ծեսերի ամբողջությունը և եկեղեցին որպես մի հաստատություն, որը հանդես է գալիս այդ կրոնական ծեսերի և սովորույթների պաշտպանի դերում, Թաղիադյանը համարում էր հայ ազգության պահպանման կարևոր գործոն, ուստի և պայքարում էր ազգային կրոնի անաղարտության համար»[1]: Թաղիադյանը կարևոր նշանակություն էր տալիս հայ եկեղեցու և հոգևորականության պատմական դերին լեզվի, ազգության, գրի և գրականության պահպանման գործում: Նա համոզված էր, որ «թե հոգևորականք չլինեին յազգի մերում ոչ գիրս ունէաք և ոչ զգրեանս: Կորուսեալ էաք մինչ ցարդ և զլեզուս մինչ իսպառ»[2]:

Մ. Թաղիադյանի կարծիքով հայ ժողովրդի ազգային պետական իշխանության բացակայության պայմաններում հայ եկեղեցին այն կազմակերպություններից մեկը պետք է լինի, որ ստանձնի աշխարհասփյուռ հայ ժողովրդին համախմբելու և հայրենիքի հետ կապելու պարտականությունը: Այդ պատճառով նա հայ եկեղեցուց պահանջում է կատարել հայ ժողովրդին համախմբողի, ազգությունը պահպանողի դեր: Նա գրում էր. «Ախ էջմիածին, էջմիածին նախկին աթոռ քրիստոնեության մերոյ, կարծեմ հասկանամաս ինչ եմ ուզում ասել, այս և այս միայն, թե ահա քեզ գարուն շնորհաբեր ի ներքո հովանավորութեան ամենաողորմած կայսրութեան ռուսաց, արի մի անգամ միայն գլուխ բարձրացրու և քո համորեն ուստերաց և դստերաց արդարև մայր հանդիսացիր»[3]: Հայ եկեղեցին որպեսզի կարողանա ծառայի հայ ժողովրդի շահերին, պետք է ենթարկվի վերանորոգման: Մ. Թաղիադյանը «Ազգասէր Արարատեան»-ի միջոցով, որպես եկեղեցական իշխանություն ստեղծելու և ղեկավարելու նմուշ, առաջարկլում է Մանուկ Զորաբյանի՝ Նոր Զուղայի վանքի, նրա միաբանների և եկեղեցու առաջնորդների համար գրած կանոնները[4]: Կանոնները ուշագրավ են այն տեսակետից, որ առաջ են քաշում համատեղ ղեկավարման, ընտրովիության և ժողովրդի առջև հաշվետու լինելու սկզբունքները: Կանոնագրքով սահմանվում էր, որ Նոր Զուղայի եկեղեցու առաջնորդը պետք է ենթարկվի հասարակության «ընդհանուր ժողովի» կողմից ընտրված «խորհրդին»: Ըստ կանոնագրքի՝ սուրբ ամենափրկչի վանքը պետք է ունենա վեց կառավարիչ (հոդված Ա), որոնցից երեքը պետք է լինեն եկեղեցական, երեքը՝ աշխարհական (հոդված Բ): Եկեղեցականները պետք է զբաղվեին վանքի ներքին գործերով, իսկ աշխարհական կառավարիչները պետք է վարեին վանքի արտաքին գործերը, այսինքն՝ պետք է զբաղվեին վանքի եկամուտների, կալվածքների, այգիների հարցերով: Կառավարիչները պետք է ընտրովի լինեին, ընտրվեն չորս տարին մեկ (ԺԳ):

Մ. Թաղիադյանը անդրադարձել է եկեղեցու վերաբերյալ Զորաբյանի կանոններում բարձրացրած հարցերին լիովին արտահայտելով իր համաձայնությունը[5]: Նա ցանկանում էր, որ «եկեղեցին բարձր կանգնած չլինի հայ հասարակությունից, որ հասարակությունը կարողանա հսկողություն սահմանել նրա վրա՝ ծառայեցնելով իր շահերին ու խնդիրներին: Նա ձգտում էր եկեղեցին ենթարկել հասարակական կյանքի պահանջներին, սահմանափակել նրա իրավունքները և դրանով իսկ պայմաններ

[1] XIX դարի հայ փիլիսոփայական մտքի պատմությունից, Մենագրությունների և հոդվածների ժողովածու, Երևան, 1969, էջ 31:
[2] Թաղիադյան, Ճանապարհորդութիւն ի Հայս, էջ 242:
[3] «Ազգասէր», 1845, էջ 64:
[4] «Ազգասէր Արարատեան», 1849, 20, էջ 155:
[5] «Ազգասէր Արարատեան», 1848թ. 23, էջ 177-179:

ստեղծել հասարակական-քաղաքական մտքի հետագա աշխարհականացման համար»[1]: Հասարակության հետագա առաջընթացը Թաղիադյանը կապում էր մասսաների կրթության, կուլտուրական մակարդակի բարձրացման, բարոյական դաստիարակության հետ: Այդ պատճառով նա կարևորում էր ազգային դպրոցի, կրտսեր սերնդի դաստիարակության, կնոջ ազատության, անցյալի ժառանգությունից օգտվելու և այլ հարցեր: Այդ տեսակետից նա կարևորում է ընտանիքը: «Ամենայն մարդ կըփափագի, որ իւր ազգն ծաղկի քաղաքականութեամբ, գիտութեամբ և ամենայն տեսակ առաքինութեամբ և ահա, զայս բան հեշտացնողքն կամ դժուարացնողքն առաջինն ծնողքն են»[2],- գրում է նա: «Ճառ դաստիարակութեան օրիորդաց» մեծածավալ հոդվածում նա քննադատում է կնոջ ստրկական և կաշկանդված վիճակը, հարց է դնում, որ կինը անպայման ուսում ստանա, գրագետ և կրթված լինի, քանի որ նա ապագա սերնդի դաստիարակն է և հատկապես մեծ դեր ունի աճող սերնդի բարոյական դաստիարակության գործում: Մ. Թաղիադյանը հայ իրականության մեջ առաջիններից էր, որ հանդես եկավ կնոջ ազատության, հավասարության և նրա կրթական-կուլտուրական մակարդակի բարձրացման պահանջով: Գիտակցելով և գնահատելով կնոջ հասարակական դերը նա կնոջը սահմանափակում էր ընտանիքի և մատաղ սերնդի դաստիարակության շրջանակներում, որը անշուշտ պայմանավորված է տվյալ ժամանակաշրջանով:

Մ. Թաղիադյանը հայ ազգի կուլտուական վերելքը կապում էր նաև հայ ունևոր խավի օժանդակության հետ: Լուսավորության տարածման համար անհրաժեշտ էր հիմնել դպրոցներ, մամուլ, տպարան, իսկ դրա համար անհրաժեշտ էր դրամական միջոցներ, որը կարող էին տրամադրել միայն հայ հարուստները: «Ոսումնականութիւն ազգիս ներկայ կախեալ կա զբարեհաճութենէ հարստաց ոմանց և բարեաց»[3]: Հայտնի է, որ հայ գաղթավայրերում և հայկական կուլտուրական կենտրոններում հայ բուրժուազիայի օժանդակությամբ էին աշխուժանում հայկական տպագրությունը, մամուլը, կրթությունը: Մ. Թաղիադյանի խմբագրած «Ազգասէր» ու «Ազգասէր Արարատեանը» հայ հարուստների հովանավորության և աջակցության արդյունք էին: Սակայն նա միաժամանակ իր պարբերականի հրատարակության փորձով համոզվում է, որ միշտ չէ, որ նրանք հոժարակամ և ակտիվ աջակցություն են ցույց տալիս ազգի լուսավորության գործին:

Հայ ժողովրդի տնտեսական և կուլտուրական առաջադիմության գործում դրամատերերի լայն խավերին ներգրավելու, օտարամոլությունից և միաձուլումից ժողովրդին փրկելու կարևոր միջոցներից մեկը Թաղիադյանը համարում էր հայրենասիրության զգացումը: Նա ձգտում է հայ ժողովրդի մեջ վառ պահել հայրենասիրությունը: Նա գտնում էր, որ անհատը կարող է իսկապես երջանիկ լինել, երբ ազատ ու անկախ է իր հայրենիքը և ապրում է տնտեսական վերելք: «Ով կամի երջանիկ կալ, նախ պիտի իր հայրենեաց երջանկութեան միտ դնի»[4]:

Հայ ժողովրդի հայրենասիրության աստիճանը կապում է ազգային ինքնագիտակցության հետ: Այդ պատճառով, հայրենիքի նկատմամբ սերը բարձրացնելու համար, անհրաժեշտ էր համարում հայ ժողովրդին ծանոթացնել իր անցյալի պատ-

---

[1] XIX դարի հայ փիլիսոփայական միտքի պատմությունից, Մենագրությունների և հոդվածների ժողովածու, էջ 35-36, Երևան, 1969:
[2] Ազգասէր», 1846, 25, էջ 39:
[3] «Ազգասէր Արարատեան», 1848թ. 9, էջ 66:
[4] «Ազգասէր», 1845, 18, էջ 139:

մության հերոսական էջերին ու մշակույթին: «Ճանապարհորդություն ի Հայս» աշխատության մեջ Թաղիադյանը գրում է, որ հայ ժողովուրդը իր հայրենասիրության և տոկունության շնորհիվ պահպանեց իրեն բնաջնջումից և այսօր էլ կա: «Հայրենասեր եկաց ազգ մեր և կայ՝ զի թեպետև բազմիցս ընդ տերամբք խստասրտօք աշխարհի ծովացաւ արեամբ անմեղաց ազգին, սակայն դեռևս մեծագոյն մասն նորա ոչ մեկնեցավ ի նմանէ: …Հայրենասեր Հայք՝ տակավին կան և մնան տառապանօք ի հողս Հայրենաց իւրեանց»[1]:

Հայրենասիրության ու ազգասիրության կոչը արտահայտում էր մարդասիրական, ժողովուրդների բարեկամության շրջանակներում: «Ազգ իմ,-գրում է նա,- սիրեա զքեզ ինքն, փարեա զվսեմութեամբ նախահարց քոց, մարդասեր լեր՛ այլ մի բնաւ օտարասեր, զքեզ և զքոյսդ արհամարելով»[2]: Նա արտահայտել է ժողովուրդների բարեկամության գաղափարը: Գտնում էր, որ ժողովուրդները, ազգերը, պետք է իրավահավասար լինեն, մի ազգ չպետք է ձգտի իշխել մյուսի վրա, չպետք է զավթի մի այլ ազգի տարածքը, ստրկացնի ու շահագործի նրան: Այս առումով ուշագրավ է եվրոպական երկրների գաղութային քաղաքականության նրա քննադատությունը:

Մ. Թաղիադյանի համոզմամբ հայրենասիրությունը կարող է դրսևորվել հայրենիքի առաջադիմությանը գործնական օգնություն ցույց տալու պատրաստակամությամբ: Այդպիսին է եղել նրա կյանքը: Նա իր կյանքն ու ուժերը նվիրել է հայ ժողովրդի լուսավորության, նրա ազգային ինքնագիտակցության բարձրացման գործին:

Այսպիսով, Մեսրոպ Թաղիադյանը XIX դարի 30-50-ական թվականների այն գործիչներից էր, ով լինելով իր ժամանակի առաջադեմ լուսավորչական գաղափարների կրող, ձգտում էր հայ ժողովրդի հասարակական-տնտեսական կյանքը վերափոխված տեսնել: Բնական իրավունքի սկզբունքների դիրքերից հանդես էր գալիս անձի ազատության, հավասարության պաշտպանությամբ, քննադատել է ճորտատիրական-բռնապետական կարգերը, հանդես է եկել սերնդի կրթության և դաստիարակության գործը բարձր հիմքերի վրա դնելու պահանջով: Նրա գաղափարախոսության մեջ կարևոր տեղ էր զբաղեցնում հայրենասիրության, ազգապահպանման, ժողովուրդների բարեկամության հարցերը: Հենց այս խնդիրները իրականացնելուն նա նվիրեց իր ողջ գիտական կյանքն ու գործունեությունը:

ПОЛИТИКО-ПРАВОВЫЕ ВЗГЛЯДЫ МЕСРОПА ТАХИАДЯНА

Алвард Алексанян

Асистент кафедры теории и истории государства и права ЕГУ, кандидат юридических наук

Статья посвящена политико-правовым взглядам просветителя, писателя, публициста, педагога 19-ого века Месропа Тахиадяна. М. Тахиадян своей идеологической борьбой и деятельностью преследовал цель перестроения

[1] **Մ. Թաղիադյան,** Ճանապարհորդութիւն ի հայս, էջ 82:
[2] «Ազգասէր», 1847, 109, էջ 293:

общественной жизни на новых началах и улучшения экономического состояния армянского народа. Основным и главным условием общественного прогресса он считал распространение просвещения, развитие науки. С позиций естественного права он отвергал монархическо-деспотические режимы, критиковал крепостничество. Для сохранения армянской нации и во избежание слияния армянского народа он считал необходимым сохранение армянского языка, национальных традиций и обычий, их вековую культуру. М. Тахиадян был одним из первых в армянской реальности, кто выступал с требованием свободы, равенства и повышения образовательно-культурного уровня женщин.

POLITICAL AND LEGAL VIEWS OF MESROP TAGHIADYAN

Alvard Aleksanyan
Assistant of the YSU Chair of Theory and History of State and Law,
Candidat of Legal Sciences

The article illustrates political and legal views of enlightener, writer, publisher and educator the 19-th century Mesrop Taghiadyan. Mesrop Taghiadyan with his ideological struggle and his all activity pursued the aim of recreating social activities on new basis and to improve the economic condition of the popular masses. He believed the basic and main condition of social progress is the spread of the Enlightenment, the development of science. From the perspective of natural law, he rejected the monarchist-despotic regimes, criticized serfdom. He finds it necessary to preserve the Armenian language, national traditions and customs, its age-old culture for the preservation of Armenian nation and to avoid the fusion of the Armenian people. M. Taghiadyan was one of the first in the Armenian reality, who made a demand of freedom, equality and enhance of educational and cultural level of women.

Բանալի բառեր – *Մեսրոպ Թաղիադյան, լուսավորիչ, բնական իրավունք, հայոց լեզու, հայրենասիրություն, եկեղեցի, կանոններ, ազատություն, հավասարություն, միապետություն*
Ключевые слова – *Месроп Тахиадян, просветитель, естественное право, армянский язык, патриотизм, церковь, правила, свобода, равенство, монархия*
Keywords – *Mesrob Taghiadyan, educator, natural law, Armenian language, patriotism, church, rules, freedom, equality, the monarchy.*